Աստիճանաշնորհում

Այս բաժինը բաղկացած է հետևյալ ենթաբաժիններից՝

- ✓ *պաշտպանություններ,*
- ✓ *մասնագիտական խորհուրդներ,*
- ✓ *քննություններ,*
- ✓ *հայցորդներ,*
- ✓ *գիտական ղեկավարներ,*
- ✓ *անվանացանկ*:



Բաժին 1

Պաշտպանություններ

Այս բաժնում Դուք կտեղեկանաք առաջիկայում տեղի ունենալիք և արդեն կայացած պաշտպանությունների մասին: Այն համապատասխանաբար բաղկացած է հետևյալ ենթաբաժիններից՝

- ✓ *մոտակա պաշտպանություններ,*
- ✓ *պաշտպանությունների արխիվ:*



Մոտակա պաշտպանություններ

Այս էջում Դուք մի քանի զտիչի միջոցով կարող եք գտնել Ձեզ հետաքրքրող տեղեկություններն առաջիկայում տեղի ունենալիք պաշտպանությունների մասին: Դրանք են՝

- անուն,
- կազմակերպություն,
- գիտական ղեկավար,
- ամսաթիվ,
- մասնագիտություն,
- խորհուրդ:



ԱՆՈՒՆ Այս վանդակում Դուք կարող եք գրել Ձեզ հետաքրքրող անձի անուն-ազգանունը, *օրինակ՝ Աշոտ Նազարյան,* սեղմել **ՈՐՈՆԵԼ** կոճակը և պարզել՝ արդյո՞ք նրա անունն առկա է մոտակա պաշտպանությունների ցանկում:



ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ Այս դաշտում Դուք կարող եք ընտրել այն կազմակերպությունը, որին առնչվող պաշտպանությունների ցանկն ուզում եք տեսնել, օրինակ՝ *Երևանի պետական համալսարան,* ապա սեղմել **ՈՐՈՆԵԼ** կոճակը:



Կոնկրետ կազմակերպությունն ընտրելուց հետո ստորաբաժանումների առկայության դեպքում բացվում է նոր՝ **ֆակուլտետ/բաժին** դաշտը,իսկ ֆակուլտետն ընտրելուց հետո էլ՝ **ամբիոն** դաշտը: *Օրինակ, եթե ընտրում եք Հայաստանի ազգային ագրարային համալսարանը, ապա համակարգը բացվող* **ֆակուլտետ** *դաշտում ներկայացնում է այդ համալսարանի ֆակուլտետների ցանկը:Դրանից հետո Դուք, օրինակ, ընտրում եք ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետը. համակարգը բացվող* **ամբիոն** *դաշտում առաջարկում է ընտրել այդ ֆակուլտետի ամբիոնները՝ ագրարային էկոնոմիկայի, ագրոբիզնեսի կառավարման և տվյալագիտության: Ընտրեք դրանցից մեկը, օրինակ՝ հենց առաջինը, ապա սեղմեք* **որոնել** *կոճակը: Մեկ այլ օրինակ. Ա. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիան ընտրելուց հետո բացվում են դրա բաժինները:*



<u>Ուշադրություն:</u> *Ֆակուլտետ, ապա և ամբիոն դաշտերը բացվում են այն դեպքում, երբ Ձեր ընտրած կազմակերպությունը ուսումնական հաստատություն է: Բաժին դաշտը բացվում է այն դեպքում, երբ Ձեր ընտրած կազմակերպությունը գիտական հաստատություն է: Կան դեպքեր, երբ գիտական հաստատությունը չունի բաժիններ:*

ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ Ձեզ հետաքրքրող գիտական ղեկավարի հայցորդների մոտակա պաշտպանությունները տեսնելու համար այս դաշտում գրեք նրա անուն-ազգանունը, *օրինակ՝ Պետրոս Սարգսյան,* ապա սեղմեք **ՈՐՈՆԵԼ** կոճակը:

ԱՄՍԱԹԻՎ Կոնկրետ ժամանակահատվածում տեղի ունեցող պաշտպանությունների ցանկը տեսնելու համար ամսաթիվ խորագրի ներքո գտնվող վանդակներում նշեք այն ժամանակահատվածը, որի ընթացքում տեղի ունենալիք պաշտպանություններին ուզում եք ծանոթանալ, ապա սեղմեք **ՈՐՈՆԵԼ** կոճակը: *Օրինակ, եթե ուզում եք տեսնել 2021 թ.-ի մարտ ամսին տեղի ունենալիք պաշտպանությունների ցանկը, ամսաթիվը համապատասխանաբար առաջին և երկրորդ վանդակներում նշեք այսպես՝ 2021 03-2021 04:*



ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ Կոնկրետ մասնագիտության պաշտպանությունները տեսնելու համար այս դաշտում նշեք Ձեզ հետաքրքրող մասնագիտությունը, *օրինակ՝ տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում,* ապա սեղմեք **ՈՐՈՆԵԼ** կոճակը:



ԽՈՐՀՈՒՐԴ Կոնկրետ մասնագիտական խորհրդում տեղի ունենալիք պաշտպանությունների ցանկը տեսնելու համար այս դաշտում նշեք Ձեզ հետաքրքրող խորհրդի անունը, *օրինակ՝ տնտեսագիտության*, ապա սեղմեք **ՈՐՈՆԵԼ** կոճակը:



- *Կարող եք որոնել թե՛ նշված զտիչներից որևէ մեկով, թե՛ բոլորով միաժամանակ, թե՛ տարբեր համադրություններով՝ ըստ անհրաժեշտության: Օրինակ, եթե գիտեք Ձեզ հետաքրքրող անձի թե՛* **անուն-ազգանունը**, *թե՛* **կազմակերպությունը**, *ապա միաժամանակ կարող եք գրել այս երկու տվյալը՝ որոնման արդյունքներն ավելի հստակեցնելու համար: Եթե ուզում եք տեսնել, թե իրավագիտության մասնագիտական խորհրդում ինչ պաշտպանություններ են տեղի ունենալու հունիսից հուլիս ժամանակահատվածում,* **խորհուրդ** *դաշտում ընտրեք իրավագիտություն տողը, իսկ* **ժամանակահատված** *դաշտում՝ 2020-06-2020-07:*

Վերոնշյալ զտիչների որոնման արդյունքում երևացող պրոֆիլների ինֆորմացիան տեսնում ենք ձախից աջ՝ հետևյալ դասավորությամբ՝

- նկար,
- անուն-ազգանուն,
- պաշտպանության ամսաթիվ, թեմա, մասնագիտական խորհուրդ և համար,
- կազմակերպության անուն:

- **Հետազոտողի պրոֆիլ** մտնելու համար սեղմեք նրա նկարը կամ անուն-ազգանունը:

Այստեղ Դուք կկարողանաք տեսնել այն բոլոր տվյալները, որ լրացրել է տվյալ հետազոտողը: Այսպես՝

- ընթացիկ պաշտոն,
- կոնտակտային տվյալներ,
- հրապարակումների ցանկ,
- հետաքրքրությունների ոլորտ,
- կազմակերպություններ,
- կրթություն և գիտական աստիճաններ,
- աշխատանքային փորձ,
- մասնագիտական փորձ,
- այցելություններ,
- մասնակցություն գիտաժողովներին,
- դրամաշնորհներ,
- այլ տվյալներ:



- Հրապարակումներին մանրամասն ծանոթանալու համար սեղմեք <u>ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ</u> կոճակը:



- Հետազոտողի նկարի ներքևում առկա է **ԴԻՏԵԼ ԸՆԹԱՑՔԸ** կոճակը:



Հետազոտողի պրոֆիլին ավելի մանրամասն ծանոթացե՛ք Հայ հետազոտողներ բաժնում՝ էջ 106-118-ում:

- **Պաշտպանության գործընթացն** ավելի մանրամասն տեսնելու համար կա՛մ սեղմեք վերոնշյալ **ԴԻՏԵԼ ԸՆԹԱՑՔԸ** կոճակը, կա՛մ եթե դեռ չեք մտել կոնկրետ հետազոտողի պրոֆիլ և դիտում եք որոնման ընդհանուր արդյունքները, ապա սեղմեք **ԹԵՄԱՅԻ ԱՆՈՒՆԸ**:



Բացվող էջում Դուք կտեսնեք հետևյալ տվյալները՝

- հայցորդ. *նշվում է տվյալ անձի անուն-ազգանունը.*
- գիտական ղեկավար. *նշվում է նրա անուն-ազգանունը.*
- հայցվող գիտական աստիճան. *նշվում է համապատասխան տվյալը՝ գիտությունների թեկնածու կամ դոկտոր.*
- մասնագիտություն. *նշվում է մասնագիտությունը և դրա թվանիշը.*
- *կազմակերպություն. նշվում է այն կազմակերպության անունը, որտեղ պաշտպանում է հայցորդը.*
- *թեմայի հաստատում. վերբեռնվում է համապատասխան փաստաթուղթը.*
- խորհուրդ. *նշվում է մասնագիտական խորհրդի անունը.*
- առաջատար կազմակերպություն. *նշվում է համապատասխան կազմակերպության անունը.*
- պաշտպանության ամսաթիվ. *նշվում է համապատասխան տվյալը.*
- կարգավիճակ. *օրինակ՝ ընթացքի մեջ է.*
- ավարտված. պաշտպանության գործընթացի ավարտված լինելու դեպքում երևում է ☑ նշանը, իսկ չավարտված լինելու դեպքում՝ ☒:

Բացի վերոնշյալից՝ ժամանակագրորեն կտեսնեք հետազոտողի գիտական գործունեության արդյունքները, օրինակ՝ *հոդված, հետազոտություն, դաշտային աշխատանք,* ինչպես նաև *պաշտպանության գործընթացին առնչվող կարևոր փաստաթղթեր*:



Ուշադրություն

Այս էջի տեղեկությունները տպելու համար սեղմեք այս նշաններից առաջինը, PDF ֆայլով ներբեռնելու համար՝ երկրորդը, իսկ որպես նամակ ուղարկելու համար՝ երրորդը:

Ուշադրություն

Դուք կարող եք խմբագրել Ձեր պաշտպանության գործընթացին առնչվող տվյալները: Դրա համար սեղմեք համանուն կոճակը:



Այնուհետև բացվող էջում կատարեք անհրաժեշտ փոփոխությունները, վերբեռնեք համապատասխան փաստաթղթերը: Այստեղ Դուք կարող եք լրացնել Ձեր քննությունների արդյունքները՝ բացառությամբ մասնագիտական քննության, կատարած սոցիալական հարցումներին կամ դաշտային աշխատանքներին վերաբերող տեղեկություններ:



Ուշադրություն

Դուք կարող եք մանրամասն տեղեկանալ թե՛ կազմակերպության, թե՛ դրա ստորաբաժանումների մասին՝ սեղմելով դրանց անունները:

- **Կազմակերպությունների** մասին ավելի մանրամասն տեղեկություններ տեսնելու համար սեղմեք տվյալ **ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԸ:** Այնուհետև բացվող էջում Դուք կտեսնեք կազմակերպությանը վերաբերող հետևյալ տվյալները՝

- կրճատ անվանում,
- հիմնադրման տարի,
- հասցե,
- հեռախոս,
- էլեկտրոնային փոստ,
- կայք,
- գերատեսչություն,
- թույլատրելի թվանիշներ:



Ուշադրություն

- ✓ Կայքի հղումը սեղմելով՝ Դուք կհայտնվեք կազմակերպության կայքում:
- ✓ Ձեզ հետաքրքրող թույլատրելի թվանիշը սեղմելով՝ Դուք կհայտնվեք տվյալ մասնագիտության պրոֆիլում, որտեղ կտեսնեք հետևյալ տվյալները՝
    - թվանիշ,
    - աստիճանաշնորհման բնագավառ,
    - քննական ծրագիր,
    - հարցաշարեր:



➢ Քննական ծրագիրը տեսնելու համար սեղմեք **PDF** ֆայլը։



➢ Հարցաշարը տեսնելու համար սեղմեք <u>ԴԻՏԵԼ</u> կոճակը։



Պաշտպանությունների արխիվ

Այս դաշտում Դուք մի քանի զտիչի միջոցով կարող եք գտնել Ձեզ հետաքրքրող տեղեկություններն արդեն տեղի ունեցած պաշտպանությունների մասին: Դրանք են՝

- անուն,
- կազմակերպություն,
- գիտական ղեկավար,
- ամսաթիվ,
- մասնագիտություն,
- խորհուրդ:



ԱՆՈՒՆ Կոնկրետ անձի պաշտպանության մասին տեղեկություններ գտնելու համար այս դաշտում գրեք նրա անուն-ազգանունը, *օրինակ՝ Լուսինե Տանաջյան*, ապա սեղմեք **ՈՐՈՆԵԼ** կոճակը:



ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՏվյալ կա զմակերպությանն առնչվող պաշտպանությունների ցանկը տեսնելու համար այս դաշտում գրեք Ձեզ հետաքրքրող կազմակերպության անունը, *օրինակ՝ Երևանի պետական համալսարան,* ապա սեղմեք **ՈՐՈՆԵԼ** կոճակը:



ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ Տվյալ գիտական ղեկավարի հայցորդների պաշտպանությունները տեսնելու համար այս դաշտում գրեք Ձեզ հետաքրքրող գիտական ղեկավարի անունը, *օրինակ՝ Լեոնիդ Զորյան,* ապա սեղմեք **ՈՐՈՆԵԼ** կոճակը:

ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ Կոնկրետ ժամանակահատվածում տեղի ունեցած պաշտպանությունների ցանկը տեսնելու համար ամսաթիվ խորագրի ներքո գտնվող վանդակներում նշեք այն ժամանակահատվածը, որի ընթացքում կայացած պաշտպանություններին ուզում եք ծանոթանալ, ապա սեղմեք **ՈՐՈՆԵԼ** կոճակը: *Օրինակ, եթե ուզում եք տեսնել 2019 թ.-ի հոկտեմբեր ամսին տեղի ունենացած պաշտպանությունների ցանկը, ամսաթիվը առաջին և երկրորդ վանդակներում համապատասխանաբար նշեք այսպես՝ 2019-10-2019-11:*



ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ Կոնկրետ մասնագիտությամբ տեղի ունեցած պաշտպանություններին ծանոթանալու համար այս դաշտում նշեք Ձեզ հետաքրքրող մասնագիտությունը, *օրինակ՝ տեսական ֆիզիկա,* ապա սեղմեք **ՈՐՈՆԵԼ** կոճակը:



ԽՈՐՀՈՒՐԴ Կոնկրետ մասնագիտական խորհրդում տեղի ունեցած պաշտպանություններին ծանոթանալու համար այս դաշտում գրեք համապատասխան խորհրդի անունը, *օրինակ՝ երկրաբանություն*, ապա սեղմեք **ՈՐՈՆԵԼ** կոճակը:



Վերոնշյալ զտիչներով որոնելու արդյունքում երևացող պրոֆիլների ինֆորմացիան տեսնում ենք այն նույն տրամաբանությամբ, որը նկարագրեցինք ***մոտակա պաշտպանություններ*** էջի համար՝ բացառությամբ այն հանգամանքի, որ այստեղ տրամաբանորեն բացակայում է **ԸՆԹԱՑՈՂ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ** դաշտը:

Բաժին 2
Մասնագիտական խորհուրդներ

Այս ենթաբաժնում Դուք կարող եք ծանոթանալ մասնագիտական խորհուրդներին վերաբերող բոլոր տեղեկություններին:

Ձեզ անհրաժեշտ տեղեկությունները Դուք կարող եք որոնել 3 զտիչի միջոցով՝

- համար,
- կազմակերպություն,
- մասնագիտություն:



ՀԱՄԱՐ Կոնկրետ մասնագիտական խորհուրդը գտնելու նպատակով այս դաշտում նշեք ձեզ հետաքրքրող համարը: Օրինակ, եթե ուզում եք տեսնել, թե 002 համարը որ մասնագիտական խորհրդինն է, գրեք 002, ապա սեղմեք **ՈՐՈՆԵԼ** կոճակը:



ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ Կոնկրետ կազմակերպությունում գործող մասնագիտական խորհուրդները տեսնելու համար այս դաշտում նշեք Ձեզ հետաքրքրող կազմակերպության անունը: *Օրինակ՝ ընտրում եք Հայաստանի ազգային պոլիտեխնիկական ինստիտուտը, սեղմում եք* **ՈՐՈՆԵԼ** *կոճակը, և համակարգը ցույց է տալիս այդ ինստիտուտում գործող բոլոր խորհուրդները:*



ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ Կոնկրետ մասնագիտությամբ գործող մասնագիտական խորհուրդները տեսնելու համար այս դաշտում նշեք Ձեզ հետաքրքրող մասնագիտությունը: Օրինակ՝ Դուք ուզում եք տեսնել *մաթեմատիկական անալիզ* մասնագիտությամբ գործող մասնագիտական խորհուրդը. ընտրում եք այն, սեղմում **ՈՐՈՆԵԼ** կոճակը. *համակարգը ցույց է տալիս 2 մասնագիտական խորհուրդ՝ Երևանի պետական համալսարանում և Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում*:



Վերոնշյալ որոնումներից 3-ի արդյունքում էլ մասնագիտական խորհուրդները հայտնվում են հետևյալ կառուցվածքային տեսքով՝

- խորհրդի անվանում,
- կազմակերպություն,
- մասնագիտություն,
- համար:



- Տվյալ խորհրդի մասին ավելի մանրամասն տեղեկանալու համար սեղմեք տվյալ խորհրդի անունը:



Բացվող պատուհանում Դուք կտեսնեք հետևյալ տվյալները՝

- կազմակերպություն,
- համար,
- խորհրդի նախագահ,
- գիտքարտուղար,
- հեռախոսահամար,
- էլեկտրոնային փոստ,
- հղում,
- մասնագիտություն:

Տվյալ խորհրդում տեղի ունենալիք պաշտպանությունները տեսնելու համար սեղմեք **ՑՈՒՑՑ ՏԱԼ ԱՅՍ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ** կոճակը:



Բաժին 3
Քննություններ

Առաջիկայում տեղի ունենալիք քննությունների մասին կարող եք տեղեկանալ այս բաժնում:



ԸՆՏՐԵԼ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ Ձեզ հետաքրքրող մասնագիտության քննության օրը տեսնելու համար այս դաշտում կատարեք համապատասխան ընտրություն, ապա սեղմեք **ՈՐՈՆԵԼ** կոճակը: Օրինակ, եթե ցանկանում եք իմանալ *մաթեմատիկա* մասնագիտության քննությունը, ապա մասնագիտությունների ցանկից ընտրեք այն:



ԸՆՏՐԵԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ Ձեզ հետաքրքրող կազմակերպություններում անցկացվող քննությունների ցանկը տեսնելու համար այս դաշտում կատարեք համապատասխան ընտրություն, ապա սեղմեք **ՈՐՈՆԵԼ** կոճակը: Օրինակ, եթե ուզում եք իմանալ Արվեստի ինստիտուտում տեղի ունենալիք քննությունների մասին, ցանկից ընտրեք այս հաստատության անունը:



ՕՐԱՑՈՒՅՑ Այստեղ Դուք տեսնում եք տվյալ ամսվա քննությունների օրերը:

ՑԱՆԿ Կայացած և տեղի ունենալիք քննությունները տեսնելու համար սեղմեք այս կոճակը:



Բաժին 4
Հայցորդներ

Այս էջում Դուք մի քանի զտիչի միջոցով կարող եք փնտրել Ձեզ հետաքրքրող տեղեկությունները հայցորդների մասին: Դրանք են՝

- կազմակերպություն,

- անուն,
- մասնագիտություն:



ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ Կոնկրետ կազմակերպության հայցորդների ցանկը տեսնելու համար այս դաշտում նշեք Ձեզ հետաքրքրող կազմակերպության անունը, ապա սեղմեք **ՈՐՈՆԵԼ** կոճակը: *Այսպես, եթե ուզում եք տեսնել Հայաստանի ազգային ագրարային համալսարանի հայցորդների ցանկը, ապա* **ՀԱՄԱԼՍԱՐԱՆ** *դաշտում նշեք տվյալ հաստատության անունը:* Համակարգը Ձեզ ցույց կտա նշված համալսարանի հայցորդների ցանկը:



- Կոնկրետ կազմակերպությունն ընտրելուց հետո առկայության դեպքում բացվում է նոր՝ **ֆակուլտետ/բաժին** դաշտը, իսկ ֆակուլտետն ընտրելուց հետո էլ՝ **ամբիոն** դաշտը: Ձեր ընտրությունն ավելի հասցեական և արդյունավետ դարձնելու համար կարող եք լրացնել նաև այս վանդակները:

ՖԱԿՈՒԼՏԵՏ/ԲԱԺԻՆ Կոնկրետ ֆակուլտետի կամ բաժնի հայցորդների ցանկը տեսնելու համար այս բաժնում ընտրեք Ձեզ հետաքրքրող ֆակուլտետի կամ բաժնի անունը, ապա սեղմեք **ՈՐՈՆԵԼ** կոճակը: *Օրինակ, եթե ընտրել եք Հայաստանի ազգային ագրարարային համալսարանը, ապա այս դեպքում համակարգը ցույց է տալիս 4 ֆակուլտետ՝ ագրարային ճարտարագիտության, ագրոբիզնեսի և տնտեսագիտության, ագրոնոմիական, անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուժության ու պարենամթերքի տեխնոլոգիաների: Ընտրում եք ֆակուլտետներից որևէ մեկը, օրինակ՝ ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետը:*



ԱՄԲԻՈՆ Ֆակուլտետն ընտրելիս համակարգը կբացի նոր՝ **ամբիոն** դաշտը՝ առաջարկելով այդ ֆակուլտետի համապատասխան ամբիոնները: *Օրինակ՝ վերևում սկսած ընտրությունը շարունակելու դեպքում համակարգը կառաջարկի ընտրել ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի ամբիոններից որևէ մեկը՝ ագրարային էկոնոմիկայի, ագրոբիզնեսի կառավարման և տվյալագիտության: Օրինակ՝* ընտրեք առաջինը և սեղմեք **ՈՐՈՆԵԼ** կոճակը: Համակարգը ցույց է տալիս վերոնշյալ համալսարանի տվյալ ամբիոնի հայցորդներին:



ԱՆՈՒՆ Կոնկրետ հայցորդին գտնելու համար այս դաշտում նշեք նրա անուն-ազգանունը, *օրինակ՝ Աշոտ Նազարյան,* ապա սեղմեք **ՈՐՈՆԵԼ** կոճակը:



- Եթե Ձեզ հայտնի է և՛ կազմակերպության անունը, և՛ հայցորդի, ապա կարող եք նշել այս 2 տվյալը միաժամանակ և սեղմել **ՈՐՈՆԵԼ** կոճակը՝ որոնումն ավելի հասցեական և արդյունավետ դարձնելու նպատակով: *Այսպես, եթե ցանկանում եք տեսնել Երևանի պետական համալսարանի հայցորդ Աշոտ Նազարյանի պրոֆիլը, ապա համապատասխան դաշտերում լրացրեք վերոնշյալ տվյալները և սեղմեք* **ՈՐՈՆԵԼ** *կոճակը:*



ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ Կոնկրետ մասնագիտություն ունեցող հայցորդների տվյալները գտնելու համար այս դաշտում նշեք համապատասխան մասնագիտության անունը: Այսպես, եթե Ձեզ հետաքրքրում են *տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում* մասնագիտության հայցորդները, այս դաշտում ընտրեք այդ մասնագիտությունը, ապա սեղմեք **ՈՐՈՆԵԼ** կոճակը: